



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՀԱՅԿԱՆ ԳՐԱՐԱՆ



ՊՍԵՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ



ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻՔ,

19 ՄԱՐՏ 1876

ՀԱՅԿԱՆ ՀԻՔՊՈՂԿՈՒԹՅԱՆ



ԻՐԱՆՈՒՆՔ ԵՎ ՊԱՐՏՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1876

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփանն Արարիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Ռուսիան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Բրիտանացի Վարդանան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Համբարձում Ս. Արարիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Գարեգին Արարիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Պողոս Պատմաբան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ԶԵՆՈՒՆԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Խորեն Արքեպիսկոպոս Նոր-Պէյ	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Տ. Յովհաննէս Բ. Մկրեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Նիկողոս Արարիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ՅԱՆՎԱՐԿԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Կուսուքեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Գեորգ Ստեփանեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Ռուբէն Կիլիկիոյ	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ՅԱՍՏԻՍԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Բրիտանացի Վարդանան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Յովհաննէս Արարիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Բարսէղ Հարանեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ՀԱՄԱՐԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Ստեփանն Պէյլիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Յովհաննէս Կասեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Սիմոն Միլիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Առաքել Ալթուն Տիրբի	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Տիգրան Կիլիկիոյ	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Օղակն Խոճասարեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ԻՐԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Մամբէկոս վ. Խորհրդեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Տ. Գրիգոր Բ. Սիւնեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Սիմեոն Մանուկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Ծաղկապետ	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Յովսէփ Մաղարեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Ստեփանն Փարսապետ	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ԿՐԹԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խաչատուր Միսաբեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Կարապետ Խիլիկեան	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ
Յարութիւն Մէլիկեան-Գալի	Կիլիկիոյ	Ք. 2312 ԹՎ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՔԱՅՈՒՄ 1875 ԱՄԵՆ

ՆԻՍՏ ԻԲ.

49 Մ Ա Ր Տ 1876

ՆԱԽԱԶ. — ԱՄԵՆ. Ս. ՊԵՏՐՈՍՐԲ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՄԼԱՆԵԱՆ


ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՐԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Բ.	ԽԱԿԻԱՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՆ	Բ.
1. Խորեն Արքեպիսկոպոս Նոր-Պէյ	Բ.	49. Միսրիս Պաշտօնաւարտի	Բ.
2. Կարապետ Խորհրդեան	Բ.	50. Յովհաննէս Ճիւղեան	Բ.
3. Ամբաստան վ. Ռուբինեանց	Բ.	51. Նիկողոս Արարիկեան	Բ.
4. Գարեգին թագաւորեան	Բ.	52. Տրդատ Փարսապետ	Բ.
5. Խորեն Կիլիկիոյ	Բ.	(Գ. Վիճակ)	
6. Հմ. յեան Դիմաքեան	Բ.	Քերտ	
7. Մատթէոս Իզմիրլեանց	Բ.	53. Արիկ Ռեճեան	Բ. Պ
8. Յովհաննէս Փարսապետ	Բ.	54. Գրիգոր Ալիլիկեան	Բ.
9. Ներսէս Արարիկեան	Բ.	55. Մարտիրոս Յ. Տիլիկեան	Բ.
10. Պողոս Խոջամեան	Բ.	56. Միկայէլ Մամբէկեան	Բ.
11. Եղիշիկ Արարիկեան	Բ.	57. Նշան Քարապետ	Բ.
12. Արարիկեան Ք. Մամբէկեան	Բ. Պ	58. Ստեփանն Խորհրդեան	Բ.
13. Գրիգոր Արարիկեան	Բ. Պ	59. Տեղեմար Մ. Կարապետ	Բ.
14. Գրիգոր Արարիկեան	Բ. Պ	60.	
15. Խորեն Փիլիկեան	Բ. Պ	61.	
16. Յարութիւն Արարիկեան	Բ. Պ	Գարեգին Կարապետ	
17. Յովհաննէս Միլիկեան	Բ. Պ	Միկայէլ	
18. Ստեփանն Ստեփանեան	Բ. Պ	63. Կարապետ Պ. Պիլիկեան	Բ. Պ
19. Սահակ Տ. Սարգսեան	Բ. Պ	64. Յակոբ Կիլիկեան	Բ. Պ
20.		65. Յակոբ Պ. Նորասուրենեան	Բ.
ԱՆՎԱՐԿԱՆ		66. Յովհաննէս Արարիկեան	Բ.
(Ա. Վիճակ)		67. Տիգրան Կուսուքեան	Բ.
Գարեգին, Կիլիկի Կարապետ		Պիլիկեան և Կարապետ	
21. Գրիգոր Պիլիկեան	Բ. Պ	68. Յարութիւն Մէլիկեան-Գալի	Բ.
Բ. Բացակայութիւն առաջին		(Գ. Վիճակ)	
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ		Կարապետ և Միկայէլ	
Բ. Պ Բացակայութիւն քանադայական		69. Յովհաննէս Կասեան	Բ.
Հ. Հրատարակում		70. Ստեփանն Պիլիկեան	Բ.
22. Գրիգոր Ստեփանեան	Բ.		
23. Խորեն Մանուկեան	Բ.		
24. Կարապետ Արարիկեան	Բ.		
25. Համբարձում Մարտիրոսեան	Բ.		
26. Միկայէլ Փարսապետ	Բ.		
27. Յովհաննէս Խոջամեան	Բ. 2		
28. Յովհաննէս Պարսեան	Բ. 2		
29. Յովհաննէս Մարտիրոսեան	Բ. 2		
30. Ն. Մէլիկեան Տարբեր	Բ. 2		
31. Պողոս Պատմաբան	Բ. 2		
32. Պետրոս Քիլիկեան	Բ. 2		
33. Ռուբինեան	Բ. 2		
34. Սարգիս Արարիկեան	Բ. 2		
35. Սահակ Արարիկեան	Բ. 2		
36. Ստեփանն Մանուկեան	Բ. 2		
37. Փիլիպոսեան Տարբեր	Բ. 2		
		(Բ. Վիճակ)	
		Պիլիկեան	
		63. Կարապետ Պ. Պիլիկեան	Բ. Պ
		64. Յակոբ Կիլիկեան	Բ. Պ
		65. Յակոբ Պ. Նորասուրենեան	Բ.
		66. Յովհաննէս Արարիկեան	Բ.
		67. Տիգրան Կուսուքեան	Բ.
		Պիլիկեան և Կարապետ	
		68. Յարութիւն Մէլիկեան-Գալի	Բ.
		(Գ. Վիճակ)	
		Կարապետ և Միկայէլ	
		69. Յովհաննէս Կասեան	Բ.
		70. Ստեփանն Պիլիկեան	Բ.

Գրքագրիչ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՔ	Գրքագրիչ
71. Կարապետ Շահապետյան	Բ. Կարին	121. Ստեփան Պ. Պ. Փարազեանց
72. Մկրտիչ Մուրադյան	Բ. Պ 101. Մանուկ Առլանեան	Տիվրիկ
Կարապետյան	Քերթազեան	122.
73. Յակոբ Ալեքանյան	102	Ջլյրուն և Մարաշ
Երեմիանյան Սամարիոյ	Աղբիւրեան	123.
74. Օգոստէ Թոմասեան	103. Ռուբին Կիւմրի շէշբուսեան	Տրապիզոն
Թօփղաթիս	Կիլիկիոյ	124. Մկրտիչ Կարեան
75.	104. Տիգրան Կիւմրի շէշբուսեան	Բ. 2 Պարտաւ
Էջույ Ս. Եղիա և Ս. Աստուածատրի	Ակն	125.
76. Գարեգին Յ. Մելիքեան	105. Պետրոս Միտրոսեան	Տիգրանակերտ
Գորոյ շէշբուսեան	Հարսիսար	126. Թաղեա թէրեան
77. Աստուա Ինչոյան	106.	Վան
Հասար և Պայազի զիւր	Արարկեր	127. Սիմոն Մարտիանեան
78. Յովհաննէս Կարեան	107. Կարապետ Թաղեան	Բ. 2 Աղբիւր
Կոր զիւր և Սրէնիս	Բաղշ	128.
79. Ղազար Հովսեփեան	108	Հայկոյ և Այրարատ
Պարտա	Պրուսա	129.
80. Աստուա Գուշատեան	109. Քրիստոսոս Գազարեան	Սիւրբապիս
81. Մկրտիչ Գ. Լասեան	Երզնկիս	130. Մկրտիչ Մելիքեան
82. Յովհաննէս Կարեան	110. Մելքոն Հարսեան	Ռուսնուի
Քարակեօմրիկ	Ամասիս	131.
83. Յարութիւն Ջլեմիքեան	111. Համբարձում Ալանեան	Կորս
84. Յարութիւն Գ. Տասեան	Բարս	132. Աբրահամ Յ. Այվազեան
(Ե. Վ. Երեմի)	112. Յովհաննէս Աղբու որեան	Չիկիսազ
Սամարիս	Երեմիս	133. Համբարձում Սարգիսեան
85. Ալեքան Պլեքեան	113. Յակոբ Ինչոյան	Հարսիս
86. Ալեքսիս Քոլոյեան	Մանչրիս	134
87. Երեմիայ Մելիքեան	114.	Ատանա
88. Միսա Ճաֆաթեան	Հասն	135. Մարտիոս Ալիքեան
89. Յակոբ Քաղապետ	115.	Եօզատ
90. Յակոբ Ամասեան	Երզնկիս և Բարսիս	136. Լօղթիթ Պալեօզեան
91. Նազարէթ Շահապետ	116.	Բ. Պ Մարտիս
92.	Թէքիրտաղ	137.
93.	117. Տիգրան Գ. Սիւսեան	138.
94.	Կիւսարիս	139.
95. Ասարի Ալեքեան Տիգրի	118 Մարտիոս Մ. Այվաթեան	140
96. Խաչատուր Պ. Մարտեան	Խարսիս	
97. Ռէթէոս Պլեքեան	119. Յովհաննէս Երզնեան	
98. Սարգիս Արապեան	Պարսիս	
99. Սարգիս Աբրահամեան	120. Յովհաննէս Յովակիմեան	
100. Սիմոն Միքայէլեան		

ՕՐԱԿԱՐԳ.

Ա. Խեղի Պատրիարքական պատասխանատուութեան վասն գործադրութեան որոշմանց Ազգային վարչութեան :
 Բ. Կրկին տեղեկագիրք խառն յանձնախումբի 'ի վերայ խեղից Աղբիւրայ (Կրկին) :



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՐԵՄՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանք բացուեցաւ ժամը 7 1/2 ին 'ի ներկայութեան 52 երեսօտեանց, որոց թիւն 'ի վերջոյ յանդեցաւ 73 ի :

Նախընթաց նստին ատենագրութեան տը պարտութիւնը ժամանակին սղութեան պատճառաւ հասած չըլլալով, Ատենապետ փաշան սոյն պարտագոյն ժողովին յայտնելէ ետե, անցաւ ատենական ուրիշ գործադրութեանց :

Բացակայութիւն

Ատենապետ փաշան ոմանց երեսօտեանց Հիւանդութեան և ճամբորդութեան պատճառներով այսօրեայ նիստէն բացակայութիւնն յայտնուած ըլլալը ծանուցանելով, անոնց անունները ժողովին հաղորդելէ ետե, որք են՝

Ռեճեան Արիկ Էֆ. Հիւանդութեան պատճառաւ
 Մանուկեան Սինեքերիմ Էֆ. ճամբորդութեան պատճառաւ

- Պալեօզեան Լօղթիթ » »
- Ղազարեան Խաչիկ » »
- Արձանագրել տուաւ ներկայութեան տուժարին մէջ :

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

Խեղի Պատրիարքական պատասխանատուութեան վասն գործադրութեան որոշմանց Ազգային վարչութեան :

ԱՏԵՆԱԳՅՑ ՓԱՇԱ. — Ինչպէս որ յայտնի է, նախընթաց նստին ժողովն որոշեց սցօթուան թողալ Սրբազան Պատրիարք Հօր այն հարցման քննութիւնը թէ վարչական ժողովոյ այն որոշմանց համար որոց ինք համամիտ չէ բայց կրատորադրէ առ ի գործադրութիւն, պատասխանատու է թէ ոչ, Գիտէք նաև որ սոյն խնդրոյն վրայ տեղեկագիր մի ներկայացեալ էր նախընթաց նստին՝ Սրբազան Պատրիարք Հօր այլևայլ առաջարկութեանց համար կարգեալ խառն յանձնախումբէն, որոց տեղեկագրերն է Մարտիոս Հոյր սուրբը. բայց եթէ չեմ սխալիր, Հոյր սուրբը Նարեան Էֆէնիին ձգեց փաստաբանել տեղեկագրոյն մասնաւորապէս « Քաղաքական նկատմամբ » քառերուն իմաստին վրայ :

Ուստի այս խնդրոյն վրայ ատենախօսելու կամը ունեցողները կհրաւիրեմ կանխաւ անուննին որձանագրել տալ զիւանին, որովս զի զիս-

ըլլայը :

Որիչ պատասխանատուութիւն մ'ալ ունի Պատրիարքը . ժամանակուոր , զոր Սահմանադրութեան Տրդ յօդուածը թողած է Պատրիարքին ըսելով՝ « երբ ստիպողական գործ մը սրտաւնի , որոյ տնօրէնութեանը համար կարելի չըլլայ մինչև ժողովոյն գումարման օրն սարսել և կամ արտաքոյ կարգի ժողով գումարել , Պատրիարքը կրնայ պէտք եղածն ինքնին տնօրինել իւր վրայ առնելով պատասխանատուութիւնն » : Ահա այս կէտին մէջ պատասխանատու է Պատրիարքը . սակայն միևնոյն յօդուածն անմիջապէս կ'յարէ թէ՛ « բայց պարտաւորեալ է ելելով ինքն արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ , և ո՛ր ժողովոյն կ'լեւարեցի նէ՛ անոր յաջորդ նիստին ներկայացնել վաւերացման համար » : Եւ այս ի՞նչու համար . վասն զի այն վայրկեանին՝ յորում ժողովը կ'վաւերացնէ Պատրիարքին ըրած տնօրէնութիւնը , Պատրիարքն իւր անձնական պատասխանատուութենէն կազատի , և ժողովը կըլլայ պատասխանատու նոյն տնօրէնութեան համար :

Պատրիարքը ժողովի մը որոշմանց վրայ զիտողութիւն ընելու իրաւունքն ունի , թէ և անոր մէջ սահմանադրական կէտ չըլլայ . բայց ժողովը Պատրիարքին զիտողութիւնը լսելէն ետև և թէ գործեալ իւր որոշումը սրտէն , Պատրիարքը Սահմանադրութեան Տրդ յօդուածին համաձայն պարտաւորեալ է նոյն որոշումը գործադրել . վասն զի որոշմանց հետևանց մասին պատասխանատու է որոշող ժողովը կամ անոր մեծամասնութիւնը : Ժողովի մը փոքրամասնութիւնը կամ Պատրիարքն եթէ համամիտ չըլլայ եղած որոշման , և զիտողութիւն ունենայ , կրնայ իւր զիտողութիւններն արձանագրել տալ :

Սահմանադրութեան այս կարգադրութիւնները հիմնական են , և նպատակ ունին ազգային գործոց բարւոք և կանոնաւոր մատակարարութիւնը : Իսկ նիւթայէս պատասխանատուութիւնը ժողովոյ վրայ բեւեաւորեալ է . այս պատճառաւ ժողովներն իրենք կատարադրեն իրենց համարատուութեան տեսրը . « մինչդեռ առաջին սահմանադրական համարատուութեան միջոցին ժամանակին Պատրիարքն , այն է Սարգիս սրտա-

րիարք ստաւրմար ստորագրած էր . և յետոյ այս սխալն ուղղուեցաւ . հետոյ հետէ հրատարակեալ համարատուութեանց մէջ :

Ահա Պատրիարքին Ազգին տալիս ունեցած պատասխանատուութիւնն այսպէս սահմանադրեալ է . և որչափ որ կայսերական կառավարութիւնը Հայոց ազգին համար տալու հասաններուն գործադրութեան բնական միջնորդ Պատրիարքը կ'անշնայ և անոր կուղղէ իւր հարցումները , այսու ամենայնիւ Պատրիարքն իւր նախագահութեան տակ գործող ժողովոյ որոշմանը համեմատ պարտական է շարժիլ . և զայս շատ աղէկ բացատրած է սահմանադրութեան խմբագիր յանձնաժողովն իւր յայտարարին մէջ որ Սահմանադրութեան սկիզբը զրած է , ըսելով թէ՛ երբ տէրութիւնը Պատրիարքին անձնական կարծիքն ուղէ խնդրոյ մը վրայ , Պատրիարքը Վարչութեան ժողովոյ որոշմանը պիտի զիմէ կտեսնէր որ ազգային խնդրոյ մէջ Պատրիարքին անձնական կարծիքը հեղինակութիւն չունի . այլ հեղինակութիւնը տրուած է ժողովոյ և անոնց մեծամասնութեան , որոյ հետ եթէ ըլլայ Պատրիարքին կարծիքը , Պատրիարքն այնչափ պատասխանատու է , որչափ են նոյն մեծամասնութիւնը կազմող անդամները :

Արիթն եկաւ որ յիշեմ՝ քանիցս կրկնուած այն խօսքը թէ՛ Պատրիարքին հետ երեսփոխանք ալ պէտք է ուխտ ընեն . սախ սխալ է : Երեսփոխանութիւնն օրէնադիր մարմինն է ազգին , ինչպէս նաև բնորոշ Պատրիարքին . և ըստ որում կրնարէ զպատրիարքն որ միջնորդ ըլլայ ազգին և տէրութեան մէջ , սրարք զրած է անոր վրայ նաև իրրև իշխանութեան ներկայացուցիչ՝ իւր զրած օրէնդին այն է սահմանադրութեան հսկել . ուստի և անկէ ուխտ կառնու առաջի Ատուծոյ և ի ներկայութեան իւրում , որպէս զի Պատրիարքն երբ իւր ուխտին հակառակ շարժի՝ պատասխանատու ըլլայ :

Վէթոյի խօսք մ'անցաւ . Պատրիարքն ինքնին Վարչութեան ժողով և խորհուրդ մը լուծելու իրաւունք չունի . այլ եթէ մէկը Սահմանադրութեան հակառակ ընթացի մէջ գտնէ , մինչ իսկ կարող է անոր ականջէն բռնելով հոս բերել . . .

ՁԱՅՆ ՄԸ . — Ականջէն բռնելու խօսքն ետ առէր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՅ . — Թող ձեռքէն բռնէ և հոս բերէ . ըսել կուզեմ թէ կամրատանէ ըզ ժողովն Սահմանադրութեան Արդ յօդուածին համաձայն . ինչպէս ժողովներն ալ պատրիարքին զէմ սահմանադրութիւն բերելու իրաւունքն ունին Սահմանադրութեան Տրդ յօդուածին համաձայն : Իսկ եթէ սահմանադրական խնդրոյ մասին չը համաձայնին , այն ստեղծ Սահմանադրութեան ՅԱրդ յօդուածին Գ . սրարքութեան համաձայն Ազգային ժողովիս կզիսեն , որ Պատրիարքն ու ժողովոյ մէջ եղած անհամաձայնութիւնը կը բառնոյ : Ուստի աւելորդ են եկեղեցական օրէնք , ազգային իրաւունք և քաղաքական նկատողութեանց մասը , ինչպէս առաջարկեց Իսթիվան Լիվնաին նախընթաց նախին մէջ . բաւական է ըսել թէ՛ Պատրիարքը ժողովիս կը զիմէ եթէ սահմանադրութեան հակառակ տեսնէ վարչութեան որոշումը : Իսկ թէ որ սահմանադրութիւնը մեկնել կուզուի և Պատրիարքին սա ժողովս զիմելու իրաւատութեան սահմանը բացատրել , բաւական է եթէ պատրիարքին ուխտը յիշուի . վասն զի ուխտին մէջ թէ՛ տէրութեան և թէ՛ ազգին հաւատարիմ մտաւ և թէ՛ սահմանադրութեան ուշի ուշով հսկելու տրամադրութիւնները կարտունակին :

Վերջայէս կառաջարկեմ Գանձնաժողովոյ տեղեկագիրը բուէի գնել սա՛ բարեփոխութեամբ . տեղեկագիրն մէջ Սահմանադրութեան բացատրութեան մասն՝ այն է « Եկեղեցական օրինաց , ազգային իրաւունց և քաղաքական նկատողութեանց հակառակ » բառերը վերցնել , և անոնց տեղ գնել « Պատրիարքարան ուխտին հակառակ » բառերը :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՅ . — Նախորդ նախին մէջ քաղաքական նկատուեք բառին աւելորդ ըլլալուն վրայ խօսողներէն մէկն ես էի , և ըսի թէ՛ այդ բառն աւելորդ է , կրնայ վերնալ և անոր տեղ Սահմանադրութեան բառը միայն բաւական է գրուիլ : Արիկա ըսել չէ թէ քաղաքական նկատողութիւն պէտք չէ ունենայ Սրբազան Պատրիարքը . այլ պէտք է ունենայ , Սահմանադրութիւնն և իւր ուխտն

ալ այսպէս կը սրահանջեն . վասն զի տէրութեան հաւատարիմ մտալ ըսելը հարկաւ քաղաքական նկատողութիւն ունենալ ըսել է . ուստի Սրբազան Պատրիարքն իւր գործակից ժողովոյ որոշմանց գործադրութեան մէջ կրնայ զիտողութիւն ունենալ և մինչև իսկ խնդիրն Ազգային ժողովին բերել : Արդ , բանի որ Սահմանադրութեան այս կէտը բացարձ է , աւելորդ է քաղաքական նկատողութիւն բառերը գնել . վասն զի առանց այդ բառերուն մտքը կ'հասկցուի իւր մէջ , և Սրբազան Պատրիարքն իւր ուխտին հակառակ կէտ մը նշմարած ստեղծ կրնայ որչափ չգործադրել և խնդիրը բերել Ազգային ժողովին : Այս նկատմամբ նախորդ տառադրութիւնս կիրկնեմ , ըսելով որ յանձնաժողովին տեղեկագիրը բուէի գրուի թեթեալ բարեփոխութեամբ մը , այն է՝ քաղաքական նկատողութիւն բառերը վերցնելով : Սրբազան Պատրիարքը պատասխանատուութիւն մը չունենար ժողովոյ որոշումները գործադրելուն մէջ , երբ Սահմանադրութեան և իւր ուխտին հակառակ կէտ մը չը տեսնէ . մինչև հիմա կատկածի մէջ էր որ այս կէտն անպատահութիւններ ունենայ և ինք պատասխանատուութեան տակ մտայ . այժմ յանձնաժողովին առաջարկութեամբ այդ պատասխանատուութեան կէտը սրտադրած է , որով իւր կատկածներն ալ կ'իրադատին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՅ . — Կ'ձայնակցիմ և ես Իսթիվան Լիվնաինին :

ԽՕԶԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՅ . — Սրբազան Պատրիարքն իւր պատասխանատուութեան մասին հարցումն ընելու խիստ մեծ իրաւունք ունէր . բայց այս իրաւունքը չէ թէ Սահմանադրութեան կանոն . այլ Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր Վարչութեան մէջ գտնուողներուն Տրդ յօդուածին տրամադրութեան զէմ որած զանցատուութենէն կառնու : Տեսէք՝ Սահմանադրութեան Տրդ յօդուածն ի՞նչ կըսէ . « ժողովոյ մէջ որոշուած գործոց վրայ Պատրիարքին քաղաքական և կամ ուրիշ սրաշածական գրութիւնները վաւերական և գործադրելի չեն կրնար ըլլալ՝ եթէ որոշող ժողովոյն կողմէն ալ կըրեալ և ստորագրեալ չըլլայ » :

Ես ազգին մէջ գտնուելովս մինչև հիմա ազ-

գային թէ կրօնական թէ քաղաքական և թէ
 խառն ժողովոց սրտմանց վերաբերեալ սրտա-
 նական գրութեանց մէջ չկրցի տեսնել որ Ար-
 բազան Պատրիարքին հետ ժողովոց գիտաններն
 ալ ստորագրած կամ կերպած ըլլան : Այս յօդ-
 առածն սրտազրկ հնարակն թէ Սրբազան Պատ-
 րիարքն առանձին պատասխանատու չէ : այլ ո-
 թշումները սուտ ժողովներն ալ իրեն հետ մէկ
 տեղ պատասխանատու են . երբ Պատրիարք մը
 սով կուզէ թող ըլլայ , կտեսնէ որ ժողովները
 միայն իրենց արձանագրութեանց մէջ ստորա-
 գրելէ ետե կրտառնին , և սրտազրկ սրտազու-
 պէս դուրս տարու , այսինքն՝ Պրան հարցուե-
 լիք քաղաքական և ուրիշ սրտազուտան գրու-
 թիւներն ստորագրելու քաջութիւնը չունին ,
 միթէ իրաւունք չունին՝ Ազգային ժողովին ղիմե-
 լու և հարցում ընելու : Ուստի թէ որ Արբազան
 Պատրիարքին այս հարցման օրինակը սրտա-
 խան մը կոչ տողիք , ըստ իս ուրիշ բան չկրնար
 ըլլալ այդ , բայց եթէ յիշեալ Տրդ յօդառածին
 արձանագրութիւնը ճշդի գործադրել տալ : Ասկէ
 զատ՝ մեր ներկայ Սրբազան Պատրիարքն իւր
 այս հարցմանը մեծ ծառայութիւն մը քրաւ ցու-
 ցունելով թէ ի՞նչ կը անուանէ սահմանադրական
 պատրիարք մը : Երբ սահմանադրութիւն չկար՝
 ա՛նքն մարդ անեն բան պատրիարքէն կարող-
 առաջնորդ ըլլալ ուղղն անոր կղիթէր , նոյնպէս
 վարձակետութիւն ուղղն : և ուրիշ անձինք՝ որ
 մասնաւոր գործ մ'ունենին , Պատրիարքին կղի-
 մէին . և երբ Պատրիարքը ժողովներուն սրտման
 հետեւելով չկարողանար իւր խառնուիլ կատա-
 րելու , բնականաբար սիս մը կը զոյտնար Պատ-
 րիարքին դէմ . այս սիսը հետզհետէ կրնար շա-
 տերուն վրայ տարածիլ , և չորս տարին անգամ
 մը Պատրիարք ժողովուր խնդիրն երեսն կեննէր :
 Եւս անգամ կտեսնենք որ Պատրիարքին վրայ
 սահմանադրութեան դէմ պակասութիւն մ'ալ
 չգտնուի նէ , ընդհանուր հակակրթութիւն մը բա-
 ւանան կըլլայ որչին սրտազուտան ընել : Բայց
 երբ այս հարցման միջոցաւ արդը և ժողովներն
 իմանան թէ Պատրիարքն աղջին ընդհանուր-
 թեան և ժողովոց մէջ միջնորդ մ'է , և մանրա-
 մասնութեանց հետ գործ մը չունին , այլ իրա-
 ւունք ունին՝ ինչպէս ժողովները նոյնպէս և պատ-

րիարքն օրինաց ծրագիրներ տալարիկէ և ալ դէն
 հաստատեալ օրինաց վերաբննութիւնը պահան-
 ձել : այն ատեն՝ թէ ազգը սորված պիտի ըլլայ
 թէ պատրիարքին ի՞նչ կարողութի , և թէ Պատ-
 րիարքը պիտի գիտնայ թէ Ազգն իրակն ի՞նչ
 կարող է :

Գալով քաղաքական նկատարութեանց կէ-
 տին՝ զոր յանձնաժողովը կառաջարկէ , թէ և
 դո՛ւրայ նկատի մէջ տանն բան խօսելու հարկ
 չկայ , բայց բիշ ըսելով ու շատ բան կրնայ
 հասկցուիլ : Մեր հրատարակութեան ղիլլին այն-
 պէս կը սրահանջէ որ վերացական մարմնաց մը
 կարձէ խօսիլ և ըսենք թէ ժողովն որոշեց .
 ժողով ըստ ուժ վերացական բնութիւն տակ ժողովա-
 կանք չունին այն պատասխանատուութիւնը ,
 զոր իրենց անձնականութեան տակ կրնան ու-
 նենալ : Երբ հիմա օրէնքի տակ դնենք թէ
 Պատրիարքը դանտուղ անձն կեթէ քաղաքական
 նկատարութիւններ ունենայ , հոս տէր է ղիմ .
 միթէ այդ քաղաքական նկատարութիւն բառաւի-
 ի՞նչ պիտի հասկնանք . եթէ փոյիթիք իմաստով
 պիտի սահունք՝ տէրք չէ հոս զոյ . ինչո՞ւ .
 վան ղի փոյիթիք վերաբերեալ խնդիրը դադու-
 նի մնալու է . եթէ հոս զոյ՝ գործանի շնոր և
 այն ատեն քաղաքական նկատարներ ալ շնոր .
 նայն իսկ տիրող կառավարութիւնն ալ չուղիք
 որ սասնի խնդիրները հոս դան . վան ղի գաղու-
 նի են և պէտք չէ որ քաղաքական ժողովոց
 դռնէն անգամ դուրս ելնեն : Օրինակով մը
 սրարկեմ բոսա . սակէ յոտաջ Խզմիրի մէջ Ա-
 դեան Սրբազանի վերադարձի մը խնդիր
 սրտազուտու . գիտենք որ այս խնդրոյն մէջ քա-
 ղաքական նկատարներ տեղի ունեցան , և Պատ-
 րիարք ու Արչաթիւնն սրտազուտու այն-
 պէս վարուիլ , ինչպէս կարձանէր խնդրոյն
 քաղաքական հանգամանքը : Հնարաւոր չէ որ
 այսպիսի խնդիր մը Նախագահին կամ Ար-
 չաթիւնն միջոցաւ Ազգային ժողովոց ստեանը
 ներկայանայ և մի՞տրամուտեան տակ լցնայ .
 Արչաթիւնն ալ կարող չէ իւր խորհրդարանին
 դռնէն դուրս հանել խնդիր մը՝ երբ քաղաքա-
 կան նկատարներու տակ է , զոր գործանի սրա-
 ձել սրտազուտու է . բայց մեր մէջ սակարար
 այս գաղափարաւորութիւնը յարգուած չէ . մինչ-

դեռ Ամերիկայի պէս ազատ երկիր մը՝ իւր հա-
 սարակապետութեան նախագահին և ծերակառնին
 արտօնութիւն չէ տուած , դուրս հանել այն
 խնդիրները՝ զոր քաղաքական նկատարաց պատ-
 ճառաւ կառավարութիւնը գաղափար պահել սրա-
 տուր է . հոն կառավարութեան անդամներն
 երդման տակ են սրտազուտ գաղափար դուրս շը
 հանելու համար . և դուրս հանողն իբրև սճրա-
 գործ ծանր պատիժ կիրէ : Մեր մէջ չկայ եր-
 դում ընելու օրէնքը . երբ օրէնքի տակ ալ սա-
 նունք՝ որ քաղաքական նկատարութեան տակ
 գտնուած խնդիրներն այս ատեանը գան , ուրիշ
 բան բրած չպիտի ըլլանք՝ բայց եթէ մեր պատրի-
 արքներուն ըսել որ տիրող իշխանութեան հետ
 արխարար պատերազմին , մինչդեռ հիմա Պատրի-
 արքն սակի ազատ է Արչաթիւնն որոշեց
 ըսել և խնդրոյն մէջ ղի դուրս ելնել : Ուստի ևս
 ալ Փափաղեան էֆէնտիին ձայնակցելով կը
 կրկնեմ՝ այն առաջարկութիւնը թէ՛ միմիայն
 Սահմանադրութիւն բառը բառական համարուի ,
 և քաղաքական նկատարութիւն բառերը վերան-
 այն պայմանաւ որ ժողովոց որոշումները պա-
 բանակող սրտազուտան թղթաց մէջ պատրիար-
 քին հետ ժողովներն ալ ստորագրեն և Պատրի-
 արքին պատասխանատուութեանը մասնակցին :

ՊԱՏՆԱՍԵԱՆ Գ. ԷՖ. — Թմէ պահ մ'ա-
 տաջ իմ կարծիքներս յայտնեցի , սակայն քաղա-
 քական նկատարութեան կէտին վրայ ալ երկու
 խօսք պիտի բնեմ : Քաղաքական նկատարու-
 թիւններ ունենալու համար պէտք է որ քաղա-
 քական յարաբերութիւն ունենանք տիրութեան
 հետ , զոր իբրև կրօնական սղգ մը երբէք չու-
 նինք . մեր ունեցածն . . .

(Պատնտեան էֆէնտի չկրցաւ շարունակել .
 երեսօրիականներէն ամանք ընդմիջեցին իւր խօս-
 քը՝ բողբելով քաղաքական նկատարութեանց
 մերժման համար ըրած խօսքերուն դէմ :)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Մեր քաղաքական
 ժողով ալ ունինք , քաղաքական գործեր և յարա-
 բերութիւններ ալ . ստանց ամենը ճանչցուած են
 ահարթեանէն , և աշխարհական այսինքն մէջիսի
 ճիւղանի , ուսուրի ճիւղանի , բառերով բացա-
 արուած :

ՍԲԱՂԱՆ ՆԱԽԱԳԱՀ . — Ենթահալալ եմ

Օգտէն էֆէնտիին՝ որ Ամերիկայի կառավարու-
 թեան ժողովոց գաղափարաւորութիւնը նկարագրեց .
 մեր մէջ բնաւ այս կէտը հասկցուած չէ և գաղա-
 նապահութիւն չկայ , որով խտարէ ըսուած բանն
 ալ չկայ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կտեսնեմ որ խնդիրն
 իւր գծէն այնքան չեղեցաւ , որ ամերիկեւ հարկ
 է , որպէս ղի կարենանք մէջէն դուրս ելնել :
 Ոմանք ուղեցին վարչութեան զլուխն եղող
 Սրբազան Պատրիարքն իբր մեքենայ մը բանել .
 ոմանք ալ քաղաքական նկատարներ չունինք ը-
 սելով իբր սրտազուտ բան մը համարել ուղեցին .
 վերջապէս իւրաքանչիւր մէկ մէկ կարծիք յայտ-
 նելով խնդրէն դուրս պարագաներու մէջ մտնել
 սկսան : Ի՞նչ էր բուն խնդիրն . ահաւասիկ Սեր-
 բազան Հօր հարցումը . Սրբազանը կհարցնէ թէ
 վարչութեան ամենամեծ մասով ըրած որոշում
 ներուն եթէ ինք համախա չգտնուի և եթէ ա-
 նոնց գործադրութիւնն երկարաձգելէ ետե սրա-
 տուրի կամայ ահամայ գործադրել , այսինքն
 ժողովրդով դրուած թղթի մը տակ կնիք դնել ,
 միթէ ինք պատասխանատու կրնաի : Ասոր
 դէմ յանձնաժողովն ի՞նչ ըսաւ . ըսաւ թէ այո՛ ,
 պատասխանատու է Սրբազան Պատրիարքը :
 Միայն սրտազայ մը կայ՝ որ յանձնաժողովին
 ուղադրութեան վրիպած էր . մեր տեղեկագրէն
 այնպէս մը կհասկցուի որ ըսեր ենք թէ Սրբա-
 զան Պատրիարքն անպատճառ պէտք է ստորա-
 գրէ որ և է թուղթ որ Արչաթիւնն որոշումը
 կպարտնակէ . բայց ո՞ր պարագայներու մէջ ար-
 տանութիւն ունի շատորագրել և ղիտարութիւն
 ընել , այս կէտը մանրամասնաբար աչքէ անցու-
 ցինք Սահմանադրութեան մէջ և աեսանք որ
 Պատրիարքին սրտազուտութիւնն տրուեր է միջ
 մը Սահմանադրութեան անթերի գործադրու-
 թեանը հսկել . և միջ մ'ալ ուխտ ընելու սրա-
 տուրութիւն տրուեր է , որոյ համեմատ մեր հը-
 ստատիած ահարթեան առջև ազգին հաւատա-
 բիւ մնալուն պիտի հսկէ . ըսել է ամեն բանի
 մէջ Սահմանադրութիւն ի ձեռին պիտի հսկէ որ
 օրէնքէն չչեղուի , և միանգամայն Պրան առջև
 մեր հրատարակութեան յարաբերութիւններն ուղ-
 ղութեան մէջ սրահուելուն պիտի հսկէ , ինչպէս
 որ այսքան գործեր է վեր Պատրիարքն եղած է

միջնորդ յարարեալ թեան ազգին և տէրութեան մէջ . վասն զի Պատրիարքը զԱզգը կներկայացնէ թէ՛ տէրութեան և թէ՛ բոլոր աշխարհի առջև . Սրբազանին ընկերական այս բարձր կացութեան հետ խոր ունեցած սահմանադրական սրբապատեմութիւնն ու իրաւունքն ալ աչքի առջև բերելով, կտեսնենք որ խոր պատասխանատուութիւնն անոնց կըստը պիտի կռօնէ և ըստ այնմ պիտի գործադրէ բոլոր ազգային խնդիրները : Ըսել կուզեմ թէ՛ Սրբազան Պատրիարքին սրբապատեմութիւնն է հսկել նաև այնպիսի կէտերուն որ թէև Սահմանադրութեան բառին կամ տառին հակառակ չեն, բայց ոգւոյն հակառակ կըրնան ըլլալ : Օրէնքին թէ՛ տառը և թէ՛ հոգին միանգամայն դիտել պէտք է . չթողուլ որ Սահմանադրութեան բառերուն համար մեծ բաներ զոհուին, այլ մեծ բաներ շահել պէտք է . ես չեմ կարծեր թէ կզանուին այնպիսի անձինք՝ որ ըսեն թէ Սահմանադրութեան բառը թո՛ղ միտուի, իսկ շահերը թո՛ղ վտանգին . այս կարծիքն ունեցող սահմանադրական ազգ մը չեմ տեսած . թէ որ ցուցունող մը ըլլայ՝ շնորհակալ կըլլամ : Քանի որ մեր սահմանադրական ազգ մը եղած ենք, և Սրբազան Պատրիարքին տուած ենք ազգին իրաւանց և սրբապատեմութեանց կշիռը, որոյ համեմատ Սահմանադրութեան տրամադրութեանց անթերի գործադրութեանը պիտի հսկէ, երբ Սահմանադրութեան տառին կամ ոգւոյն հակառակ կէտ մը տեսնէ, խոր հսկողութեան պարտքը պիտի կատարէ . ես սուղի հեռուն կերթամ, թէ որ նոյն խոյն այս ժողովը Սահմանադրութեան հակառակ զիրքի մէջ տեսնէ՝ կարող է բռնել և Ազգէն ուրիշ երեսփոխանութիւն մը խնդրել :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Յ. ԷՃ . — [Ընդմիջելով] զեռ չէ առած այդ իշխանութիւնը, ինչպէս Պ. Թիւր ալ չէր առած :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՃ . — [Թարուհակելով] Իմ խօսքս տեսականի վրայ է . ուրեմն Սրբազանի արտօնութիւններն ազահութեամբ կըսեցինք և ըսինք թէ պարտաւոր է ստորագրել և ստատոսանալ լինիլ . իսկ այն բաներուն մէջ՝ ուր Սահմանադրութեան հակառակ կէտ մը կտեսնէ, այսինքն՝ տառն ու ոգին իրարու չեն համարար-

տասխանել, և ստոր բացատրութիւնն ալ տըւինք, այսինքն՝ ազգին մեծ շահերն՝ որ ոգւոյն մէջ են, տառին հակառակ կեղծն, այսպիսի պարագայից մէջ ըսինք՝ Ազգը ներկայացնող ժողովն այս է, հա բնութ խնդիրը : Թէ որ Ազգը լակ բառերով կառավարուիլ չուզէր, ինչպէս պէտք չէ որ ուզէ, և թէ որ Պատրիարքին վերայ վստահութիւն ունինք, ինչպէս պէտք է որ ունենանք, երբ հոս զիսկու ստիպողական պէտք մը տեսնէ, մեր պարագաները չհարցնելով ալ զնա գործադրէ կըսենք : Իսկ թէ որ սրբազաները զեղծման մէջ ըլլան, քանի որ խնդիրն այս ատեանը պիտի գայ, կրնանք ըսել թէ վարչութիւնը խաղաղիկ կընեն, և անվստահութեան բռն մը տուածնուս պէս՝ Պատրիարքն ըստ այնում կ'իջարուի, և այն ատեն կարևոր պարագաներու մէջ միայն հոս կ'զիմէ : Ես չեմ տեսնէր որեւէ վտանգ մը այս կէտին մէջ, քանի որ հոս պէտք է զիմէ կըսենք կոր . իսկ թէ որ կասկած կամ երկիւզ մը կ'զգայք, այսմանստամ մ'ալ կրնանք զնել և ըսել որ այս ինչ պայմանաժամին մէջ հոս պէտք է զիմէ : Բայց կազաչեմ, բառերու հետ մի խոզար, և բառերու մէջ մի փակէք ազգի մը ճակատագիրը :

ՓԱՓԱՋԵԱՆ Յ. ԷՃ . — Սահմանադրութեան տառի և ոգւոյ վրայ խօսեցաւ Նուրեան Էֆէնտի . կէտ մը՝ որ 4 տարի գրողեցուցած է արդէն այս ժողովն . կարծէ որ բացատրութիւն մը տամ աւոր վրայ : Սահմանադրութիւնն արդէն խոր մէջ կարգաւանակն այն ամեն բան, որ եկեղեցւոյ և ազգին շահուցը կ'պատկանի, և ոգին արդէն տառին մէջ կ'ըմբռնուի : Երբ թէ՛ Պատրիարք և թէ՛ Վարչութիւն ազգին շահուց հակառակ կէտի մը սրտաշինն, այսինքն՝ տառն ու ոգին զէմ առ զէմ գտնեն, սրբապատեմութեան են հոս զիմել, և անոր բացատրութիւնը կամ վերաքննութիւնը խնդրել : Երբ կ'ունենադրութեան 70 և 75 յողուածոց տրամադրութիւններն ալ այսպէս կ'պահանջեն . Նուրեան Էֆէնտի ըսած ազգային շահերուն ամենն ալ Սահմանադրութեան մէջ կը գտնուին . եթէ կան այնպիսի շահեր ալ որ չը գտնուին, Պատրիարքն իրբև Վարչութեան Պետ՝ այդպիսի սրբազայ մը տեսած ատեն ի-

բառեր ունի հոս զիմել և վերաքննել տալ : Այդէն Պատրիարքին ըրած ուխտը հիմն է այս ամեն բաներուն :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՃ . — Փախազեան Էֆի . այդ բացատրութեան կը հետևի թէ արդէն համաձայն ենք իրարու :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Եղած վիճարանութեան վրայ խնդիրն ամբողջով կը տեսնենք որ Ս. Պատրիարքին հարցման ընդհանուր կերպիւ միևնոյն սրտասխանը կը տրուի . նախ՝ բնաբան է որ եթէ Պատրիարքը թուղթ մը ստորագրէ որչազ ժողովին կամակից ըլլալով, ինչն ալ անոր հետ սրտասխանատու է : Իսկ այն սրբազայներուն մէջ՝ ուր Պատրիարքը ժողովոց որոշումը կատարագրէ առանց ինքն համամիտ ըլլալու, դարձեալ սրտասխանատու է . վասն զի բառական է որ ստորագրէ որ սրտասխանատու ճանչցուի, զի ստորագրելովն ինքն ալ ընդունած կըլլայ որոշումը : Իսկ երբ գիտողութիւն մը ունենայ, Սահմանադրութիւնն արդէն ըսած է որ ստորագրելն առաջ կրկին քննութեան կրնայ յանձնել . և որչազ սուտ ժողովն և թէ խոր որոշումը վերահաստատէ, Պատրիարքը սրտասխան է ստորագրել : Միայն երբ կասկածի թէ Սահմանադրութեան հակառակ կամ անհամաձայն կէտ մը կայ նոյն որոշման մէջ, իրբև սահմանադրական Պատրիարք չկրնար ստորագրել և գործադրել, և դարմանը նոյն ինքն Սահմանադրութիւնը ցուցած է տրամադրելով՝ որ այսպիսի սրբազայից մէջ Ազգ . ժողովիս զիմէ : Ուրեմն Սրբազանին հարցման տարբ սրտասխաններն սա կերպով կրնանք սահմանել թէ՛ « Պատրիարքը միշտ սրտասխանատու է խոր ստորագրած որոշմանց համար . իսկ սրտասխանութիւն անի ժողովով եղած որոշում մը չը ստորագրել, եթէ Սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ ըլլողը կասկածի » :

Ես իրբև դիտանին կարծիքը և ձեր վիճարանութեանը արդիւնքը մէջ կը բերեմ զատենք . իսկ իրբև երեսփոխանն աւելի բացատրութիւններ ունիմ տալիք այս կէտին վրայ . այս սրտաճառու բեմը պիտի ելնեմ իրբև երեսփոխան խօսելու :

ՁԱՅՆԵՐ . — Ո՛չ, ո՛չ, հարկ չըկայ, ի

զիտանէ խօսեցէր, և պէտք եղած բացատրութիւնները տուէք :

(Ստեղծարար Պոչան՝ որ ոտք եղած էր ի բեմն երթալու, ժողովին սոյն թոյլտուութեան սեղի տալով, նստաւ ու շարունակեց խօսքը որ է)

Նախ պէտք է դիտանենք թէ մեր Ազգ-Վարչական կազմութիւնը բնաւ մէկ ազգի և տէրութեան վարչական իշխանութեան շնամանիրմեր վարչական իշխանութիւնը Պատրիարքութեան յանձնուած է, և սա երեք մասերէ կը բաղկանայ . գլուխն է Պատրիարքը որ Ազգին պիտն է, եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեաց և նախագահ ո՛չ միան Վարչական այլ և Երեսփոխանական օրէնսդիր Ազգ . ժողովոյ . միւս երկու մասերն են Կրօն . և Քաղ . ժողովները որ Ազգին զիտոյն հետ վարչական մարմնաց գրեթէ երկու թեւերը կը կազմեն, որով կազմէ : Այս երբեակ մարմինն է աւասիկ որ մեր գործերը կը տնօրինէ . բոլոր ազգային գործերն անոր զլ ինն եղող Պատրիարքին կողմէն, բայց անոր նախագահութեամբ Կրօնական կամ Քաղաքական և կամ իրան ժողովով կորչուին և կը տնօրինուին . սոյն ժողովները զուտ խորհրդական չեն Պատրիարքին, ինքնուրոյն գործադիր տը չեն իշխանութեան . վարչական զիտոյն կողմէն Ազգ . ժողովոյ մեծագոյն մասին մէջէն կամ զրոնն ընտրուած տակ սրաշտօնեաց ալ չեն, այլ ինչպէս իրենց նախագահը, նոյնպէս և իրենք Ազգային ժողովէն ընտրեալ են, և վարչական իշխանութեան խորհրդակից և գործակից կարգեալ են Պատրիարք նախագահին . կա՛ն այսպիսի վարչական կազմութիւն մը որ և է Ազգի և Տէրութեան մէջ . ամենին . ասի եզակիան բան մըն է որ մեզ յատուկ է, և զոր ձներ են սրբազայներն Քանանեան պետութեան մայրաքաղաքիս տիրած ժամանակ, և զոր սահմանափակ կարգադրեր են ազգային հնաւանդ սովորութիւնք և ՚ի վերջոյ Ազգ . Սահմանադրութիւնը :

Արդ՝ Ազգ. Մահմանադրութիւնը պատասխանատու կը կարգէ զՊատրիարք առաջի Տէրութեան և Ազգի. և ասոր համար իրեն յանձնած է վարչական բոլոր որոշմանք ստորագրել և գործադրել, այն ժողովոց հետ որ իւրաքանչիւր իր իրաւասութեան շրջանակին մէջ և միշտ Պատրիարքին նախագահութեամբ խնդիրներ կորուցնեն և անօրէնութիւններ կընեն. Պատրիարքն ասոնց ասոնց խորհրդակից գործակցութեան բնաւ անօրէնութիւն չընէր. եթէ ստիպողական պարագայից մէջ ընել պարտաւորի ալ նէ, Մահմանադրութիւնը իր վրայ հարկ կըդնէ՝ վերաբերական ժողովին նոյն տնօրէնութիւնը վաւերացունել տալ փութաւ. ուշադրութիւն կընէ՞ք, վաւերացունել տալ և ո՛չ լոկ արձանագրել. բայց ժողովներն ալ աւանձինն ոչ մի ինչ կարող են անօրինել. Պատրիարքը հետեւին և գլխին պէտք է ըլլայ. եթէ բացակայ գտնուի, նա իրաւունք ունի ժողովոց որոշումը անժամանակ մի անգով ծաղրելի ձգել և կրկին քննութեան ենթարկել նոյն ժողովոց ատենը. և նաև յետ սոյն կրկին քննութեան, եթէ նոյն որոշման մէջ Մահմանադրութեան հակառակ բան տեսնէ, կամ կասկածի, բնաւ խօս չը գործադրէր, և աստի կը ծնանին Պատրիարքի և ժողովոց մեծ անհամաձայնութիւնք, զոր Մահմանադրութիւնը նախատեսած է և որոց վճատու ատենն ցոյց տուած է Ազգ. Երեսի. ժողովը, և ահա իբրև կնիք սոյն վարչական մարմնոց երկու մասնոց համընթացութեան, Մահմանադրութիւնը կը տրամադրէ թէ «վարչական բոլոր պարտական գործիքներ, բոլոր գրութիւնք և ո՛չ միայն թագրիրներն, ինչպէս ոմանք կարծիք ըրած են, պէտք է ստղալու ըլլան Պատրիարքին հետ որոշող ժողովոց կողմէն, որպէս զի վաւերական և գործադրելի ըլլան. ուշադրութիւն կընէ՞ք, վաւերական և գործադրելի. ըսել է որ ժողովներն ալ Պատրիարքին հետ կը զործեն, Պատրիարքն ալ ժողովոց հետ կը խորհրդակցի և երկուքը մէկէն կատարադրեն:

Արդ՝ Մահմանադրութիւնը կը պահանջէ որ ամենայն անգային տնօրէնութիւնն պատասխանատու մը ունենայ, և պատասխանատուութեան նշան՝ ստորագրութիւնն է. և ասի բնական բան

մի է. սլ որ զիր մը կատարագրէ, նա՛ անոր տէրն է և անկէ կը բնութաւի պատասխան. եթէ այս այսպէս է ստիպական անձանց համար. ընկերական սովորական գործոց մէջ, ո՞րչափ ևս առաւել վարչական իշխանական տնօրէնութեանց մէջ, ուր Մահմանադրութիւն կայ տիրող, երեսօրհանութեան մը կայ հսկող և հարցանող. վարչութիւնն ամեն բանի պատասխան տալու պարտաւոր է և ստորագրութիւնը որու որ է, անկէ կը բնութաւի պատասխան:

Այս խորհրդածութեամբ կը տեսնէք որ Պատրիարքը երբէք չկրնար պրծիլ պատասխանատուութենէ. ի՞նչ բանի որ ստորագրէ՞, հարցուած ժամանակ պարտի անոր պատասխանը տալ:

Պատրիարք, միայն Պատրիարքը չէ ստորագրող, ժողովներն ալ իրենց գլխանի միջոցաւ կ'ստորագրեն, անոնք ալ պատասխանատու պէտք է ըլլան. այո՛, այսպէս է. և ո՛վ կ'ուրանայ ասի. եթէ ուրացուած բան մը կայ, ոչ թէ ժողովոց պատասխանատուութիւնն է, այլ անոնց նախագահող պատրիարքին. կ'ըսեն թէ «սո՛ երեսն կը պարտաւորի ժողովոց մէջ ինք փոքրամասնութեան մեջ մտալով, մեծածոյն մասի կարծեաց տեղի տալ և զոյն ստորագրել ՚ի գործադրութիւն. ի՞նչպէս կարելի է իրեն կարծեաց հակառակ եղած բանին, զոր յակամայից ստորագրած է, ինքն ըլլայ պատասխանատու. ասոնց ևս կը հարցունեմ, եթէ պատրիարքը չըլլայ պատասխանատու, ո՛վ պիտի ըլլայ ուրեմն. ժողովոց մեծածոյն մասն, բայց ի՞նչ է այդ մեծածոյն մասն ըսածդ շօշափելի մարմին մըն է, զո՞վ պիտի բռնես, կարելի չէ՞ որ իւրաքանչիւր հարցապահեալ անգամ զինքն սոյն պարագային մէջ ազատելու համար պատասխանէ թէ նոյն խնդրոյն մէջ ինք հակառակ կողմ քուէ տուած է, միթէ՞ մեր անհազրութեան մէջ իւրաքանչիւր անգամ ո՛ր կողմ քուէ տուած ըլլալը բացորոշ կարծանագրութիւն. ո՛չ, ուրեմն, այս կարծիքին հետևողութեամբ, ազգային վարչութեան պատասխանատուութեան հիմը կը քանդուի: Ամենայն տնօրինութիւն պէտք է ստորագրեալ ըլլայ

պատրիարքէն և տնօրինող ժողովի գլխանէն. և պատասխանատու ըլլան ստորագրողք, որ և է պատճառաւ ստորագրած ըլլան նէ ըլլան. Արքազանը մեզ կ'ըսէ թէ երբեմն խոհեմութեան կամ խաղաղութեան համար կատարագրէ, ասոնց ինք համամիտ ըլլալու. ևս կը հարցունեմ թէ Արքազանը խոհեմութիւն կամ խաղաղութիւնը ընդունած չըլլար. այո՛, ընդունած կըլլայ. ուրեմն պէտք է պատասխանատու ըլլայ. Վարչութեան վրայ հսկող և հարցանողին անկէ դատել թէ Արքազանն այն գիրը ստորագրելու ժամանակ խոհեմութիւն ընել կարծեալով խոհեմութիւն ըրած է թէ ո՛չ. կը տեսնէ՞ք, Արքազանը դարձեալ պատասխանատու եղաւ, եթէ ոչ խնդրոյն էութեանը, այլ ընդունած խոհեմութեան կամ խաղաղասիրական ընթացքին համար:

Իբրև եզրակացութիւն. կ'ըսեմ թէ Արքազանին մեզ ուղղած հարցման միակ և օրինաւոր պատասխաննիս սա պէտք է ըլլայ «երբ և ո՛ր և ի՞նչ բանի համար որ կատարագրես, պատասխանատու ևս ստորագրութեանդ ընկերակցողին հետ միանգամայն»: Բայց Արքազանը պէտք է շիրտչիլ մեր այս պատասխանի խառնութենէն. նախ՝ Արքազանն ընկեր ունի իրեն պատասխանատուութեան ժողովոց գլխան մը, և երկրորդ՝ երբ Արքազանն իր ստորագրած բանին համար չ'ըլլալով և մեծածոյն մասի կարծեաց տեղի տալով ստորագրած ըլլալը անհազրութեան միջոցաւ յայտնէ, և իր ստորագրելուն հարկադրիչ պատճառները ցոյց տայ՝ ՚ի հարկէ դատարեալ ժողովին առջև կը թեթեանց պատասխանատուութիւնը և կարգարանայ խօս. բայց պէտք է միշտ աչքի առջև ունենայ, թէ անդ ուր ինք ստորագրութիւն կընէ, պարտաւորութիւն կատանձնէ պատասխանել և արդարացունել իր սրտը. վասն զի թէ և Պատրիարք է, ըսել է Հայր հասարակաց, սակայն Մահմանադրական Պատրիարք է, ըսել է պատասխանատու հասարակաց, և առաջի Աստուծոյ ուխտած է ըստ Մահմանադրութեան վարտիլ:

Կէս մը միայն մնաց որ պէտք է բացատր

բեր. — Պատրիարքը իր բացակայութեան ատեն ժողովով եղած որոշում մը կրնայ չգործադրած՝ կրկին քննութեան յանձնել. և յետ այսորիկ բնաւ չգործողութիւն, եթէ Մահմանադրութեան հակառակ դատի. այս պարագային մէջ խնդիրը պէտք է ըստ Մահմանադրութեան Ազգային ժողովոց ատենը բերուի. բայց ո՛վ պիտի բերէ. ասի որոշելու է, և որոշելու համար ուղիղ բանը բաւական է մեզ առաջնորդելու, ըստ որում Պատրիարքն է որոշումը հակառակ Մահմանադրութեան դատող, նա պէտք է խնդիրն անէ ու բերէ մեզ ՚ի դատաստան, եթէ չբերէ՝ Պատրիարքը դարձեալ պատասխանատու կըլլայ, թէ և ոչ մի ինչ ստորագրած է. բայց այս անգամի պատասխանատուութիւնը խնդիրը ստորագրել և գործադրելու համար չէ այլ ընդհակառակն շատրագրել և չգործադրելուն համար. Ազգը կը պահանջէ որ իր գործերը միշտ տեսնուին, բայց միանգամայն կը հսկէ իր երեսօրհանութեան միջոցաւ որ զեղծումն չարտասնի. ուրեմն Պատրիարքը պատասխանատու է ոչ միայն զեղծմանց տեղի տրուած ժամանակ այլ նաև գործերն անաւս եղած և ժողովոց որոշումները անգործադրելի մտացած ժամանակ. և որպէս զի թէ՛ Պատրիարքին պատասխանատուութիւնը և պահալուի, և թէ՛ Ազգային հսկողութիւնը և թէ՛ Ազգին իրաւունքը, պէտք է ինչպէս Նուրեան կ'ընտրի առաջարկեց, սոյնմանամ մը որոշել, որոց մէջ Պատրիարքը պարտաւոր ըլլայ անհամաձայնութեան հանդիպած խնդիրը բերել յատեն Ազգային ժողովոց և անկէ անդին պատասխանատու ճանցուի շատրագրած որոշման անմարձադրելի մեղաւն, և որոշող ժողովի իրաւունք ունենայ բողոքելու. և ասոր համար ևս ամիս մը կամ երկուք սոյնմանամ ժամ սահմանել կատաճարկեմ:

Ստեղծ են ահա իմ խորհրդածութիւններս Պատրիարքական պատասխանատուութեան խնդրոյն վրայ, և զոր Ձեր վիճարանութենէն լուսաւորուելով կը ներկայացնեմ Ձեզ. և եթէ կը հաճիք, ամիսօրէնով կրնամ Ձեր քուէարկութեան առաջարկել, սո՛ւպէս:

« Պատրիարքը պատասխանատու է իւր ըս

« տարագրած որոշմանց համար : Իսկ Պատ-
 « րիարքն արածուխիսն ունի ժողովով եղած
 « որոշում մը չստորագրել, եթէ զայն Սահ-
 « մանադրութեան արամադրութեանց հակառակ
 « համարի : Սոյն ստորագրային մէջ Պատրիար-
 « քը ստորաւոր է խնդիրն Ազգային ժողովոյ
 « առեանը հանել, առ առաւելն մինչև մէկ ա-
 « միս, ի թայ առեալ արտօքոյ կարգի խափա-
 « նորար ստորագրաները :

« Իսկ սոյն պայմանաժամէն յետոյ, Պատ-
 « րիարքը պատասխանատու է որոշման անդոր-
 « ժադրելի մնալուն՝ առաջի Ազգային ժողովոյ,
 « առ որ կրնայ զխնել Վարչութեան որոշող
 « ժողովը » :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պատրիարքը պաշ-
 տօնական թուղթ մը գրէ նէ՝ ժողովն որոշեց
 ըսելով կգրէ և կստորագրէ. սասի չը՛կրնար
 պատասխանատուութենէ ազատիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է որ մեր սահ-
 մանադրական օրէնքն էլ կը կրնար. մեր Սահմանա-
 դրութիւնը կարահանէ որ վարչական որոշմանը
 Պատրիարքն միանգամայն որոշող ժողովոյ կող-
 մէն ստորագրեալ ըլլան, որպէս զի վաւերական
 և գործադրելի զանախն :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Կաղաչեմ, այդ
 խօսքդ բացատրէ՛ Ստեփանոս' տ փաշա :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սահմանադրութիւնը
 զայս լաւ բացատրած է. ճիշտ յօդուածի Բ. ստոր-
 բերութիւնը կըսէ « Պատրիարքը իրեն եկած
 գործերը ո՛ր ժողովոյ կվերտրերի՝ այն ժողովոյն
 կյանքնէ քննութեան և որոշման համար : Ժողո-
 վոց մէջ որչափ գործոց վրայ Պատրիարքին
 բարդիւններ և կամ ուրիշ պաշտօնական գործիւն-
 ներն վաւերական և գործադրելի չեն կրնար ըլլալ,
 երէ որոշող ժողովոյն կողմէն ալ կը քննուի և ստորա-
 գրեալ չըլլան :

Ես կշիշեմ որ Պօղոս Պատրիարքին օրով
 մինչև Էջմիածին գրիւած թուղթերն անգամ ես
 իրրե վարչութեան զիւանին անդամ ստորագրած
 եմ Պատրիարքին հետ միասին :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ս. Քր սովորու-
 թիւնն այժմ ի գործ չգրուիր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եթէ պաշտօնա-
 կան նամակները ժողովներն ալ ստորագրելու
 ըլլան, շատ կերկարի. մէկ շարթուան գործն

տանէ մը չըլնար : Այս պատճառաւ ժողովներն
 իրենց որոշմանց արձանագրութիւնը միայն կըս-
 տորագրեն. և այս բաւական է կարծեմ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Իմ հարցումս շատ
 պարզ էր. խելքս չհասած բանի մը համար սրբ-
 տաւոր էի հոս գալ և հարցնել : Զձեզ լուսարա-
 նելու համար օրինակաւ մը բացատրեմ՝ ըրած
 հարցումս : Ըսենք թէ Վարչութիւնը 20 հոգիէ
 բաղկացեալ է, և պէտք եղաւ տեղ մը առաջ-
 նորդ կամ փոխանորդ մը գրիւել. 16 ը որոշեց
 որ այս ինչ անձն կրթոյ. իսկ Պատրիարքը մէկ
 երկու ժողովականի հետ առաջորդեալ անձը
 յարմար չտեսնելով ուրիշի մը համար ըսին որ
 այն կրթոյ : Հոս ոչ Սահմանադրութեան և ոչ
 ալ բազմաթիւն նկատողութեան խնդիր կայ.
 միմիայն սրտածնի գրիւելու համար առաջորդեալ
 երկու անձանց վրայ անհամաձայնութիւն կայ.
 ժողովն իւր մեծամասնութեամբ Պատրիարքին
 յարմար չգտած անձը զրիւել որոշելէ ետեւ,
 Պատրիարքը թէ որ գործադրէ իրրե մեծամաս-
 նութեան որոշում, և եթէ այդ որոշումն գէշ
 հետեանքներ ծագին, Պատրիարքը միթէ պա-
 տասխանատու պիտի բռնուի՞ : Ահա այս է հար-
 ցայսսս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազանը մանրա-
 մասնութեան մտաւ, պէտք է ըստ այնմ պա-
 տասխանեմք : Երբ պաշտօնի գրիւած անձը չէ
 թէ Պատրիարքին, այլ ժողովին մեծամասնու-
 թեան ընտրածն է, և յանցաւոր զանախ իւր
 պաշտօնին մէջ, Պատրիարքը գործեալ իւր ընտ-
 րածը չէ ըսելով չկրնար պատասխանատուութե-
 նէ ազատիլ. այլ պատասխանատու է ժողովին
 հետ մէկտեղ. վասն զի ինքն ալ ստորագրած է
 զայդ որոշում և ի գործ գրած. միայն երբ իրն-
 զիրը մեծնոց և Պատրիարքը դատասխանուի սոք
 պատճառաւ, ոյն առեն կրնայ իր պատասխա-
 նատուութիւնը թեթեւցունել և բողբոլին իսկ
 արդարեանալ Ազգ. ժողովին առջին, յայտ առ-
 նելով և առեանադրութեամբք ապացուցանելով
 իրեն համակարծիք չգտնուողը և ինչ նկատմամբ
 և ինչ պատճառներով զայն որոշում ստորագրած
 ըլլալը : Եթէ մեք այս սկզբան չհետեւինք, վար-
 չական մեքնոցն վեր ի վայր կըլքի. Սրբազանին
 մէջ բերած օրինակն իրեն գործունեալով հարցու-
 նեմ « Եթէ Սրբազանն իրեն անցորմար դա-

տած թայց ժողովոյ մեծ մասին որոշմանն ընտ-
 րուած մէկը առաջնորդ կարգէ վիճակի մը, և
 սար անկարգ ընթացքով ժողովրդեան մէջ դըժ-
 տութիւն ծագի և բողբո բառնան առ Պատրի-
 արարան, Սրբազանը կրնայ պատասխանել նոյն
 ժողովրդեան թէ օրնրն անտարտ է այդ մասին,
 առաջնորդն խառն ժողովոյ մեծադոյն մասին
 ընտրածն է, անոր պէտք է զիմեն, ինր սր-
 դէն կանխաւ իրենց պէս բողբո ըրած է և յա-
 կամայից ստորագրած ». եթէ Սրբազանն այս-
 պէս պատասխան մը տայ բողբոլոց, ո՞ր
 կը մնայ վարչական իշխանութեան արժանա-
 պատուութիւնը և ազդեցութիւնը. կը հարցը-
 նեմ Զեզ Տեւրթ, կը բայլէ՞ այս տեսակ
 Վարչութիւն մը : Ուստի պէտք է խառնու-
 նինք և բացարձակապէս յայտնեմք թէ Պատ-
 րիարքն իրրե Վարչութեան գլուխ դրած ստո-
 բադրութեանց և կնքոց տէրն է և պատաս-
 խանատու որոշող ժողովին հետ մէկ տեղ,
 թէ և ինք համաձայն չըլլայ նոյն որոշման :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Սահմանադրա-
 կան ազգի մը մէջ Վարչութեան առաջին
 գործադիր պաշտօնէին ըսել թէ դուն պատաս-
 խանատու ես այս ինչ խնդրոյն մէջ զոր սահ-
 մանադրապէս գործադրեք ես, ինձ կերի թէ
 սրդարութեան հակառակ է : Սրբազան Պատ-
 րիարքին հարցումը խիստ իրաւացի է. ըստ ո-
 բում նկատել է որ շատ Պատրիարքներ ալ
 կրնան այս դժուարութեան ենթարկուիլ, վասն
 զի ուր որ բազմութիւն կայ, կարծեաց զանա-
 զանութիւն ալ կայ, և Պատրիարքն ալ իրրե
 անգամ վարչութեան իւր կարծիքն ունի, ինչ
 իրաւունք է ըսել իրեն թէ պատասխանատու
 ես. երբէք չէ տեսնուած որ ժողովոյ մը որո-
 շում մէկ անձի մը պատասխանատուութեան
 ենթարկուի : Սրբազան Պատրիարքն ոչ միայն
 իւր Պատրիարքական իշխանութեան մէջ կը
 նկատէ այս խնդիրն, այլ իր սկզբունքի կէտ
 կրերէ հոս : Վարչութեան նախագահ մը արտ-
 տական է գործադրել ժողովին որոշումն երբ
 տեսնէ թէ Սահմանադրութեան հակառակ չէ.
 իսկ երբ որոշումն իւր կարծեաց հակառակ է,
 ինչ պէտք է ընել. Սահմանադրութեան մէջ
 զձուած է իւր ստորաւորութիւնը, խնդիրը ո-

րոշող ժողովին կրկին քննութեան կյանքնէ, և
 կամ Ազգային ժողովին կը բերէ իրրե տնչա-
 մաձայնութեան խնդիր : Ենթադրենք թէ մեծ
 խնդիր մը չըլլայ Պատրիարքին և ժողովոյ մեծա-
 մասնութեան մէջ անհամաձայնութեան նիւթ
 եղող խնդիրն, ինչպէս որ Նորին Սրբազնու-
 թիւնն օրինակաւ մը խիստ աղէկ բացատրեց,
 և իւր հարցման նպատակը լաւ հասկցուց. երբ
 սասնկ պարագայի մը մէջ մեծամասնութեան
 որոշման տեղի կուտայ և կը գործադրէ նոյն ո-
 թշումը. ինչ իրաւունք է ըսել թէ այդ մեծա-
 մասնութեան որոշումն իրն է և ինքն է պատաս-
 խանատու անոր, բանի սր մեծամասնութեան
 կարծիքն առեանադրուած կըլլայ հարկաւ. այդ
 մեծամասնութեան ըրած որոշման համար ժողո-
 վը պատասխանատու է. եթէ ըսենք Պատ-
 րիարքին թէ մեծամասնութեան որոշման հա-
 մար ստատասխանատու է, փորբամանութեան
 համար ալ նոյնն ըսելու ենք. ես կարծեմ թէ
 երբէք արդարութիւն չէ ըսել որ քու համադ-
 մանդ հակառակ եղած որոշման համար պատաս-
 խանատու ես : Այս տեսութեամբ Սրբազան
 Պատրիարքի բերած խնդիրը շատ զիւրին կեր-
 պով կրնայ լուծուիլ և պատասխանը տրուիլ :
 Իսկ թէ որ մեք սխախ պատասխանենք այն
 յանձնաժողովին՝ որ Պատրիարք Սրբազանի
 խնդիրը քննութեան առաւ, և իւր կարծիքը
 յայտնեց տեղեկագրով մը, խօսքերը կերկարին,
 և որպէս զի վիճարանութիւնը կարճ կատուի,
 կառաջարկեմ որ սու մտօր պատասխան տրուի
 Սրբազանին հարցման թէ՛ Պատրիարքը կամ
 ժողովոյ մը Նախագահը պատասխանատու է
 միայն ժողովոյ այն որոշմանց՝ որ եղած են մե-
 ծամանութեամբ, և զորս իւր խղճին հակա-
 ռակ չգտնել. իսկ պատասխանատու չէ այն
 որոշմանց, որք թէ և մեծամասնութեամբ եղած
 են ըստ սահմանադրութեան, սակայն ինք հա-
 մախտ և համակարծիք չէ անոնց, և զորս կը
 գործադրէ առանց Ազգային ժողովոյն բերելու
 ըստ տրամադրութեան Սահմանադրութեան. և
 կամ առանց գործադրելու կը բերէ զայնս Ազգա-
 յին ժողովոյն, և Ազգային ժողովը կընդունի
 Վարչութեան նոյն որոշումն ընդդէմ՝ կարծեաց
 Պատրիարքին :

Այս է իմ համոզումս . և կը խնդրեմ որ անցնի իմ առաջարկութիւնս ալ ի թիւ քուէարկելի միւս առաջարկութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Առաջարկութիւնք է ի հասան . առաջինը Յանձնաժողովէն , երկրորդը՝ Փափագեան էֆէնտիին , երրորդը՝ Գիւանի կողմէն , և չորրորդը՝ Խորէն սրբազանէն : Թէոր ժողովը վիճարանութիւնը փակել ուզէ , առաջարկութիւնները քուէի կը դնենք :

Բայց սակէ առաջ հարկ կը համարիմ կըրկին յայտարարել թէ Պատրիարքի անձին վրայ չէ խնդիրը , այլ Պատրիարքական իշխանութեան . նոյն իսկ Արչուքեան գործադիրը միայն Պատրիարքը չէ , ժողովներն ալ գործակից են , և բուն գործակողներն են , Գիւանատունն , Բաբուրեհեանին , եւն . որիչ կատարութեանց մէջ քաղցիկն կիցնայ , և թէ իր պատասխանատուութիւնը չիրոնաց ազատել կամ Աղգ . ժողովին վստահութիւնը կորուսանէ . բայց պետը կը մնայ . իսկ մերն անանկ չէ , Պատրիարքն անբաստանութեան ենթարկեալ է . ժողովներն ալ նոյնպէս . անոնք ալ Պատրիարքին հետ կնիք կը դնեն , անոնք ալ կատարագրեն , և անոնք ալ կրնան անբաստանութիւն ու կնիք . մեր անհրապելի նախագահ մը և պատասխանատու սուրբանանցներ չունինք , այլ երբախումք վարչական մարմին մը որ պատասխանատու է առաջի Աղգ . ժողովոյն թէ ամբողջապէս , և թէ առանձինն իր երբեակ մասանց մէջ : Անոր համար ըսի թէ այն վայրկեանին՝ որ Պատրիարքը կնիք և ստորագրութիւն կը դնէ , պատասխանատու է Ժողովին հետ մէկտեղ . չկրնար ըսել թէ խղճիս կամ համոզմանս դէմ կնիքեցի . ստորագրութիւն դնելէ ետե՛ւ՝ ալ խղճի խնդիր չմնար . միմայն երբոր դատաստեակու կէտին հասնի , այն ատեն կրնայ պատասխանել թէ ևս փոքրամասնութեան մէջ էի , մեծամասնութիւնն որոշեց և ևս հաւանեցայ առ ի խոհեմութիւն . և եթէ այս պատճառն արդարացի երկնայ ժողովին , Պատրիարքն ալ կարգարանայ : Արքայական քաննի որ Սահմանադրութիւնը բայց դուս մը թողեր է Պատրիարքին , որոյ համեմատ ուղի՛նէ չկնիքէր ժողովին որոշումը , անշուշտ կրնե՛րէն ետեւ ալ պատասխանատու կըլլայ , և չը

կրնար խուսափել պատասխանատուութենէ , բայց միայն այն ատեն՝ երբ խնդիրը մեծնալով դատաստեակու ըլլայ , և նոյն պահուն ինքզինքըն արդարացնէ պատճառներն յայտնելով :

Հիմա կը հարցնեմ թէ Ժողովը այլ ևս ըլլատարութեան սէտք ունի՞ր և վիճարանութիւնը կուզէ՞ր փակել :

ԱՄԵՆՈՒՍՏ ԶԱՅՆԵՐ . — Բուէ՛ , քուէ :

Անմիջապէս քուէի դրուելով , ժողովը միանայնութեամբ ՈՐՈՇԵՑ վիճարանութիւնը փակել :

